Հարություն Հարությունյան

Կրթություն

1993-2003 թվականը սովորել է Բաղրամյանի միջնակարգ դպրոցում, ինչպես նաև երաժշտական դպրոցում:

2003-2007 թվականը սովորել է Հայաստանում Ֆրանսիական համալսարանի իրավաբանության ֆակուլտետում:

2007-2009 թվականը սովորել է նույն համալսարանի մագիստրատուրայում:

Աշխատանքային փորձ

2006-2007 թվականը աշխատել է «Բաղրամյանի պոլիկլինիկա և մոր ու մանկան պահպանության կենտրոն» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան:

2008-2011 թվականի մարտ ամիսը աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմում՝ որպես դատավորի օգնական:

2009 թվականին ստացել է փաստաբանական գործունեության թիվ 916 արտոնագիրը, սակայն փաստաբանությամբ զբաղվում է 2011 թվականի մարտ ամսից:

2012 թվականից հանդիսանում է «Իրավաբանական խորհրդատվական խումբ» ՍՊԸ-ի տնօրեն:

2015 թվականից առ 2025 թվականի մարտ ամիսը, հանդիսացել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ:

2019 թվականի սեպտեմբերից առ 2021 թվականը աշխատել է ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան «Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան:

Դատավորների ընդհանուր ժողովի կողմից 01.10.2021 թվականին ընտրվել է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամ՝ 4 տարի ժամկետով: Թեկնածությունն առաջադրված է եղել «Ֆրանսախոս փաստաբանների միություն» ՀԿ-ի կողմից:

Այլ տեղեկություններ

2003-2007թթ. հանդիսացել է Alliance Jeunesse-ի նախագահ:

2007 թվականի փետրվարին հիմնադրել է Ֆրանսիական համալսարանի ուսանողական խորհուրդը և ընտրվել նախագահ մինչև 2008թ.:

2006 թվականի սեպտեմբերի 20-30-ը ակտիվորեն մասնակցել է Ֆրանսիայի հանրապետության նախագահ Ժակ Շիրակի պատվիրակության ուղեկցության աշխատանքներին և ստացել անհատական պարգև:

2011 թվականից հանդիսանում է «Արտասահմանում բնակվող ֆրանսիացիներ» ընկերության բարեկամ:

Ուսումնական պրակտիկան անցկացրել է Ֆրանսիայի հանրապետության «Արամին» ընկերության միջազգային վարչությունում: Ունի ինչպես հայկական, այնպես էլ Ֆրանսիայի Լիոն 3 համալսարանի պետական դիպլոմներ:

Հանդիսանում է «Ֆրանկոֆոն փաստաբանների միավորում» իրավաբանական Հ/Կ-ի համահիմնադիր:

Տիրապետում է հայերեն, անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներին: